



ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱԻՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՓԱՌԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲԵՏԻՔԵԱՆ
ՈՐ Ի ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾԻՆ

Միրելի՛ Սրբազան,

Ուրախութիւն է Մեզ համար Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բա-
րեմաղթանքները բերել Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակա-
շատ սպասաւորիդ:

Այսօր ուրախ առիթն ունենք գնահատանքով անդրադառնալու Առաքե-
լական մեր Սուրբ Եկեղեցու անդամատանում Ձեր նուիրեալ սպասաւորութեա-
նը: Անթիլիասի դպրեվանքում եւ ապա Երուսաղէմի Ժառանգաւորաց վար-
ժարանում աւարտելով Ձեր հոգեւոր ուսումնառութիւնը՝ Դուք ազգին ու
եկեղեցուն անձնուէր ծառայանութիւնի ուխտ կնքեցիք Տիրոջ Սուրբ Սեղանի
առջեւ եւ ստանձնեցիք կուսակրօն հոգեւորականի առաքելութիւնը հաւա-
տաւոր մեր ժողովրդի կեանքում:

Ձեզ պատասխանատու ծառայութիւն վստահուեց Երուսաղէմի Հայոց
Պատրիարքութիւնում, այնուհետեւ Աստուծոյ կամօք հովուական սպասաւո-
րութեան կոչուեցիք ԱՄՆ Հայոց Արեւելեան Թեմում՝ երկար տարիներ ան-
նուազ նախանձախնդրութեամբ հոգեւոր անունդ ջամբելով մեր ժողովրդի
հաւատաւոր զաւակներին: Ձեր առաքելութեան մէջ կարեւոր յանգրուան
դարձաւ սպասաւորութիւնը Դիթրոյթի համայնքում: Հովուական անխոնջ
նուիրումով Դուք եկեղեցու շուրջ միաւորեցիք բարեպաշտ Հայորդիներին
եւ բարի գործերով ու նախաձեռնութիւններով շինութիւն ու պայծառութիւն
յաւելեցիք տիրախնամ համայնքին: Դիթրոյթի Ծուխի պատմութեան մէջ կա-
րեւորագոյն ձեռքբերումներից է Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցուն կից
«Ալիք Մանուկեան» թանգարանը, որ հիմնեցիք Դուք Ձեր պաշտօնավարման
տարիներին՝ թանգարանին նուիրելով նաեւ բազմաթիւ նմուշներ Ձեր անձնա-
կան հաւաքածուից:

Ափիւռքում քահանայագործութեան երկար տարիների վաստակը Ձեր ուսերին եկաք Հայրենիք՝ Ձեր կարողութիւնները ի սպաս բերելու Հայրենաբնակ մեր ժողովրդի հոգեւոր կեանքի նորոգութեանը եւ մեր հոգեւոր ծննդավայրի՝ Սուրբ Էջմիածնի յաւէտ պայծառութեանը: Այսօր Մենք ուրախ ենք հաստատելու, որ ինչպէս Շիրակի թեմում, այնպէս եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ծառայեցիք անձնուիրութեամբ ու Ձեր պարտականութեանց հանդէպ առաւելագոյն բծախնդրութեամբ:

Քրիստոսի հաւատարիմ սպասաւորիդ կեանքը զարգարուած է նաեւ բարեսիրական գործունէութեամբ, որ իրագործում էք ինքնաբուխ յանձնառութեամբ եւ Ձեզ հատուկ համեստութեամբ: Ձեր անձնական խնայողութիւնները Դուք ծառայեցնում էք մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը, նաեւ Ձեր օրինակով խրախուսում էք բազմաթիւ Հայորդիների՝ իրենց վաստակը ի սպաս բերելու ազգօգուտ ու եկեղեցւոյն ծրագրերի իրականացմանը: Յատկապէս գովելի է Ձեր աջակցութիւնը ծնողական հոգատարութիւնից զրկուած մանուկներին, ովքեր Ձեր օգնութեամբ յաղթահարում են կեանքի դժուարութիւնները, զօրանում հաւատքով ու լաւատեսութեամբ:

Բարձր գնահատելով մեր Սուրբ Եկեղեցու անդամատանում Ձեր վաստակը եւ տարիների ծառայութիւնը՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ի սրտէ աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած՝ Հայցելով Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնը Ձեզ: Թող Ամենակարող Տէրը քաջառողջութիւն եւ արեւշատութիւն շնորհի Ձեզ, երկնառաք օրհնութեամբ լցնի Ձեր կեանքը եւ միշտ պահի ու պահպանի Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո:

Ողջ լըտութիւն ձեր, զօրացնալ շնորհօր Սուրբ Հոգւոյն և յաւիտ օրինաւ ի Մենք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ԶԱՅՈՅ